INECOBANK

30.09.2025 № Ե 10421

**ԵՐԱՇԽԻՔ N EA25/01034**

1. Սույն երաշխիքը (այսուհետ՝ երաշխիք), ինչպես նաև սույն երաշխիքի բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը (այսուհետ՝ երաշխիք) հանդիսանում են **ՀՀ Կրթության Գիտության Մշակույթի և Սպորտի Նախարարության** (այսուհետ՝ բենեֆիցիար) կողմից **ՀՀԿԳՄՍՆԷԱՃԱՊՁԲ-25/168 (Չափաբաժին 3)** ծածկագրով կազմակերպված գնման ընթացակարգին **«ՎԱՐԴԱՆՅԱՆ» ՍՊԸ-ի** (այսուհետ՝ պրինցիպալ) մասնակցելուց բխող՝ նույն ծածկագրով իրավերով սահմանված պարտավորությունների (այսուհետ՝ երաշխավորված պարտավորություններ) կատարման ապահովում:

2. Երաշխիքով **«ԻՆԵԿՈԲԱՆԿ» ՓԲԸ-ն** (այսուհետ՝ երաշխիք տվող անձ) անվերապահորեն պարտավորվում է բենեֆիցիարի՝ սույն երաշխիքով սահմանված կարգով և ժամկետում ներկայացված գրավոր պահանջով (այսուհետ՝ պահանջ) բենեֆիցիարին վճարել **2,145,000.00 (երկու միլիոն մեկ հարյուր քառասունհինգ հազար) ՀՀ դրամ** (այսուհետ՝ երաշխիքի գումար)՝ պահանջն ստանալուց հինգ աշխատանքային օրվա ընթացքում: Վճարումը կատարվում է բենեֆիցիարի **ՀՀ ՖՆ գործառնական վարչություն 900008000466** հաշվեհամարին փոխանցման միջոցով:

3. Սույն երաշխիքն անհետկանչելի է:

4. Սույն երաշխիքից բխող բենեֆիցիարի՝ երաշխիքի գումարի վճարումը պահանջելու իրավունքը կարող է փոխանցվել այլ անձի երաշխիք տվող անձի գրավոր համաձայնության դեպքում:

5. Երաշխիքն ուժի մեջ է մտնում Բանկի կողմից Երաշխիքի ելքագրման ամսաթվից, որը նշված է սույն Երաշխիքում և գործում է մինչև **09/04/2026թ.-ը** ներառյալ: Սույն երաշխիքի տրամադրման փաստի վերաբերյալ տեղեկատվությունը՝ երաշխիքի համարը, տրամադրող բանկի անվանումը և սույն երաշխիքի 1-ին կետում նշված ծածկագիրը՝ առանց գումարի չափի մասին նշման, երաշխիք տվող անձը երաշխիքը տրամադրելու օրը իր պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեից ուղարկում է սույն կետում նշված գնման ընթացակարգի իրավերում նշված՝ գնահատող հանձնաժողովի քարտուղարի liana.kharatyan@escs.am էլեկտրոնային փոստի հասցեին:

6. Բենեֆիցիարը պահանջը ներկայացնում է երաշխիք տվող անձին գրավոր ձևով՝ ՀՀ, ք. Երևան, Թումանյան 17 հասցեով: Պահանջին կից ներկայացվում է հայտը մերժելու մասին գնահատող հանձնաժողովի նիստի արձանագրության պատճենը:

7. Երաշխիք տվող անձը բենեֆիցիարի կողմից ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը ստանալուց հետո առավելագույնը հինգ աշխատանքային օրվա ընթացքում քննարկում է ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը՝ սույն երաշխիքի պայմաններին դրանց համապատասխանությունը պարզելու համար:

8. Երաշխիք տվող անձը մերժում է բենեֆիցիարի պահանջը, եթե՝

1) պահանջը կամ կից փաստաթղթերը չեն համապատասխանում սույն երաշխիքի պայմաններին.

2) պահանջը ներկայացվել է երաշխիքով սահմանված ժամկետի ավարտից հետո:

9. Երաշխիք տվող անձը պահանջը մերժելու մասին որոշում ընդունելու դեպքում անհապաղ, բայց ոչ ուշ, քան նույն աշխատանքային օրը, մերժման մասին տեղեկացնում է բենեֆիցիարին:

10. Սույն երաշխիքի նկատմամբ կիրառվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի համապատասխան դրույթները:

11. Սույն երաշխիքի կապակցությամբ ծագող վեճերը ենթակա են լուծման Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

**Լիազորված անձ՝**
**<<Արմավիր>> մ/ճ ՓՄՁ բիզնեսի**
**բաժնի ղեկավարի ժ/պ**

**Ռոբերտ Մկրտչյան**

Կատարող՝ Անգելինա Միսիթարյան
Հաճախորդների վարկերի սպասարկման ծառայություն
Բիզնես վարկերի և լիզինգի բաժնի մասնագետ
Հեռ. +37410 510 510 (5477)

Ստորագրող
ՆԱՐԵԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ
3003840290

2025-10-10 14:58:32 GMT+04:00
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից